ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 11.12.2023թ. հ.056 գրության՝ տեղեկացվում է, որ ավտոբուսային հ.12 երթուղում շարժակազմի քանակը սահմանված է 11 միավոր, որի դեպքում շարժման միջակայքը կազմում է 11-12 րոպե: Շարժման միջակայքի մեծ լինելը պայմանավորված է սահմանվածից պակաս քանակի շարժակազմ երթուղի դուրս բերելու հանգամանքով (հիմնականում ավտոբուսների անսարքության պատճառով), ինչպես նաև մայրաքաղաքի առանձին փողոցներում տրանսպորտային հոսքերի հապաղումներով և խցանումներով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ երթուղին սպասարկող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից մշտապես տարվում են աշխատանքներ՝ ավտոբուսները վերանորոգելու, երթուղում դրանց քանակն ավելացնելու, շարժման միջակայքերը փոքրացնելու և ուղևորների սպասարկման վիճակը բարելավելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ